WIEN 1

ՆՈՐ-ԴԱՐ

№ 175 ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ աբաթ 30 Սեպտեմբերի 1895 Հ աբաթ 30 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 175

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատը՝ 5 կ.
Բաժանորդ պրուում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
или Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն տիսուներով: Յայտարարութիւնների բաժին 2 դ., բեկամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիր Պետերբուրգից:
«Նովոյէ Վրեմեա»-ի հեռագիրները:
Կ. Պոլսի խառնակութիւնները:
Նոր հրահանգներ:
Հայոց գործեր:
Փաստեր և մտքեր:
Ֆրոնիկոն. —Բաթումից: Անգլիական կայսրի գիրքը: Քահանաների և երեցվոյսանների ժողով, Երգեցիկ խմբեր: Զ. Աբիմեանի անձնասպանութիւնը: Քաղաքային երկչարաթաթերթիներ: Բալախանիից: Ռոստովից: Վազարշապատից: Նոր-Նախիջեւանից: Դուշէթից: Շամախուց: Նոր տեսակի պրեմիա: Պալրոցական ճանապարհորդութիւն: Զարթիը վերջ ունի:
Քաղաքական. — Արեւելեան մի նոր հիւանդ:
Խառն լուրեր:
Հեռագիրներ:
«Նոր-Դար»-ի պատասխաններ:
Բանասիրական.—Ոսկու զոհեր:
Յայտարարութիւններ:

ՆՈՐ ՀԵՌԱԳՐՆԵՐ

Սեպտ. 22-ից «Ռուս. Դործակալութիւնը» հեռագրում է մեզ.

Կ. ՊՈԼԻՍԻՑ («Նովոստի»). — Ռադոսթօյում սեպտեմբերի 27-ին ծանր անկարգութիւններ կատարեցան: Սամսոնում, Բերա արուարձանում յունական ժողովուրդը շարունակում է: Նաւակայում հայոց խանութներն առաջուայ պէս փակ են: Հրաման է արձակուած, որ Դարդանելի միջով գիշերները ոչ մի նաւի թոյլ չտրուի անցնել:

ԼՈՆԴՈՆԻՑ («Նովոստի»). — «Standard»-ը հաղորդում է, թէ մինիստրների խորհուրդը Կ. Պոլսում, որ ամբողջ գիշերը նիստ ունէր, վճռեց ընդունել մեծ պետ. տուժիւնների Հայաստանի համար առաջարկած ռեֆորմների ծրագիրը մի քանի փոփոխութիւններով:

«ՆՈՎՈՅԷ ՎՐԵՄԵԱ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 20 սեպտեմբերի.—Երեկոյեան դէմ նորից յուզումներ սկսուեցան երեք տեղերում՝ Սկիւտարում, Պանդալթիում և Զեան Բազարում, հայոց եկեղեցու մօտ: Սկսեցին հայերը: Բոլոր վնասուածների թիւը թուրքերը հաշւում են մինչև 36 երկու կողմից, իսկ ուրոպացիները—մօտ 200. Վաճառականները խանութների առաջ գրգռիչ ճառեր էին խօսում: Բազմաթիւ են ձերբակալուածները: Այսօր հայերը դուրս չեն գալիս: Բազմաթիւ խանութներ փակ են: Բազաքում չրջում են պահապան զինուորներ: Դուռը ապագրած ծանուցումներով յայտարարում է, որ միակերպ խիստ պատասխանատուութեան կ'ենթարկուեն կարգը խանգարողները և զինեալ դիմադրութեան հեղինակներն առանց բացառութեան: Օտարերկրեայ ներկայացուցիչներից ապատում են իրենց բնակուած հպատակներին և Դրան այդպիսի յայտարարութիւնը կողմուածքային ապօրինի խանգարումն են համարում:

ԲԵՐԼԻՆ, 23 սեպտեմբերի.—Լրագիրները խորհուրդ են տալիս, որ եուրոպական դաշնակցութիւնը սառնասրտութեամբ վերաբերուի Թիւրքիայում կատարուող անցքերին, դատապարտելով միևնոյն ժամանակ բրիտանական քաղաքականութեան երեւոյթները և հարերին դրգռումներ անելը: Նախատեսում են, որ ռուսաց և բրիտանական նաւատորմիղներն անխուսափելի կերպով պիտի յայտնուեն Բոսֆորում, դիպլոմատիական կոնֆերենցիա հրաւիրելն աւելորդ համարելով:

ԼՈՆԴՈՆ, 23 սեպտեմբերի.—Այսօրուայ լրագիրները բանակութիւ են մղում ֆրանսական, գերմանական և աւստրիական մամուլի օրգաններին հետ, որոնք Անգլիային մեղադրում են, թէ նա է հայերին դրդել կատարելու Կ. Պոլսի անկարգութիւնները: Անգլիայի քաղաքական աշխարհը ապշած է, ըստ երեւոյթին, ցամաքային Եւրոպայի այն մեղադրանքների վրայ, որով նա Անգլիային պատասխանատու է համարում Թիւրքիայում թափուած արեան համար:

Գեամիլ-փաշան, ըստ երեւոյթին, հետեւում է Գերմանիայի խորհուրդներին, ուստի «Standard»-ը կրկնապատիկ խրատութեամբ յարձակւում է Թիւրքիայի վրայ, յայտարարելով, որ վերջինս կորցրել է իր բոլոր իրաւունքները Մեծ Բրիտանիայից կարեկցութիւն և պաշտպանութիւն առանալու: Լրագրի կարծիքով, եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներից կազմուած մի կոնֆերենցիա կարող էր հետացնել պատերազմը և անօրինել Թիւրքիայի պահպանման նահանգների բաղդը:

ՊՈԼՍԻ ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լոնդոնից հեռագրում են «Նովոստի»-ին. Այստեղի արտաքին գործերի միոխարութեան մէջ Կ. Պոլսի անկարգութիւնները լուրջ անյք են համարում: Շատերն են սպանուած և վիրաւորուած: Կ. Պոլիսը զինեալ բանակի տեսք է առել: Սուլթանը յուզմունքից քուն կորցրել է:

«Berliner Tageblatt» թերթը հաղորդում է, որ Կ. Պոլսի վերջին ցոյցի ժամանակ հայերն աղաղակում էին. «Մենք ուզում ենք մեր սեպհական թագաւորն ունենալ»: Սպանուած է 30 հայ և 175-ը վիրաւորուած է:

ՆՈՐ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

«Times»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ բրիտանական, ֆրանսիական և ռուսաց դեսպաններն իրենց կառավարութիւններից պէտք է նոր հրահանգներ ստանան, հայոց խնդրի մասին բանակցութիւնները նորոգելու վերաբերմամբ:

ՀԱՑՈՑ ԴՈՐՆԵՐ

(«Նոր-Դար»-ի Պարիզի թղթակցից)

Կ. Պոլսից, սեպտեմբերի 30-ից (Ն. տ.) այստեղի պետական լրագրերին հեռագրել են. «Այսօր մի մեծ ցոյց տեղի ունեցաւ Սամսոնում, հայ յուղիչների թեղադրութեամբ: Ոստիկանութիւնը ցրուեց ցուցարարներին, սպանելով և վիրաւորելով բազմաթիւ անձեր: Բազմաթիւ ձերբակալութիւններից յետոյ կարգը վերականգնուած է»:

Արտաքին գործերի մինիստրը պաշտօնապէս հետեւալն է հեռագրել դեսպաններին. «Հայոց պատրիարքարանի չրջապատի մէջ մի քանի յուղիչներ խռովութիւններ յարուցին, բայց, չնորհիւ ձեռք առած միջոցների, այժմ կատարեալ խաղաղութիւն է տիրում»: (Սորրագրած) Թիւրխան:

Կ. Պոլսից, ժամը, կէսօրից յետոյ, 2-ին Լոնդոնի Թրքական դեսպանը ստացաւ հետեւեալ հեռագիրը.

«Մի քանի յուղիչ հայերի սպրդանօք խռովայոյզ խմբեր դումարուեցան այսօր հայոց պատրիարքարանի չրջակայքում և առաջը. բայց, չնորհիւ իշխանութեանց ձեռք առած միջոցների, կարգը չարունակում է պահպանուել:

Սրանք թիւրքաց պաշտօնական հեռագրներ են. սրանց արժէքը յայտնի է:

Պարիզի գլխաւոր լրագրերն այսօր հրատարակել են հետեւեալ հեռագիրը. «Սամսոնի մէջ տեղի ունեցած հայկական ցոյցի ժամանակ, հայոց պատրիարքն ապատանած էր Պէօյիւք-Տէրէ. այսօր նա Պոլիս դարձաւ ազգային ժողովի խորհրդով»:

Ռէյտերի Գործակալութիւնը Կ. Պոլսից հեռագրում է.

«Միջերկրականի բրիտանական նաւատորմիղից տասնեւօթն նաւ այսօր հասաւ Լեմնոս կղզու առաջ, Դարդանելի մուտքի մօտ: Նաւատորմի մեկնումը Սալոնիկից չատ մեկնութիւնների տեղիք է տալիս և պաշտօնական շրջաններում մեծ ապատորութիւն առաջ բերից—մանաւանդ, որ ինչպէս երեւում է, նաւատորմի նախնական յատակագծերը փոխուած են:

«Սէօր Ֆիլիպ Պարրի Դրան ուշադրութիւնը հրաւիրելով այն հանգամանքի վրայ, որ մի երիտասարդ հայ բանուում եղած ժամանակին չարչարանքի է ենթարկուել, ժխտողական պատասխան ստացաւ թէ որևէ չարչարանք չի գործադրուած, սակայն Դուռն ընդունեց, որ ձերբակալուած է մի հայ, յեղափոխական ընկերութիւնների հետ յարաբերութեան մէջ լինելու համար: Սակայն հակառակ Դրան ժխտողական պատասխանին, ընդհանրապէս կարծուում է, որ խոշտանգանք և դանակոծութիւն տեղի են ունեցել այն հայ բանտարկեալների նկատմամբ, որոնք ձերբակալուեցան վերջին սպանութիւնների համար:

«Կ. Պոլսի հայերը պատրաստուում են մեծ ցոյցեր առաջ բերելու իրենց երկրում ռեֆորմների ներմուծման օգտին, բայց Դուռն աչքառում է համոզել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿՈՒ ԶՈՀԵՐ

ԹԱՄԱՆԱԿԱԿԻՑ Վ. Է.Պ

(Շարունակութիւն *)

Ը.

Պատերազմական դէպքերի մանրամասնութիւնները պատմութեան վերաբերող բաներ են, որոնց մասին չպէտք է խօսեմ: Բաւական է ասեմ, որ բանակը չատ թեթև ընդհարումներով էր առաջ գնում և իր առջև լուրջ կռուող թշնամի դեռ չկար:

Մեր գործը նոյնպէս աջող էր: Վաճառկի ապրանքը վարձու սայլերի վրայ չարձած՝ բանակի քայլերի հետ առաջ էինք գնում և այնտեղ՝ ուր կանգ էր առնում զօրքը, կանգ առնելով և մենք սկսում էինք վաճառել:

Ծոգնած զինուորներն ու սպաները, գնում էին դէպի մահ, դատ իւրաքանչիւր վարկեանը ձեռքից չէին թողնում զուարճանալու, որքան թոյլ էր տալիս նրանց ծանր պաշտօնը:

Նրանք ամենևին չէին հարցնում տուածդ ապրանքի դինը, ոչ էլ նայում էին քանակի ու տեսակի վրայ: Առանց սակարկութեան վճարում էին պահանջած դինը, թէև նա լինէր քառապատիկ աւելի իսկական արժէքից:

Ոչ միայն այս, այլև ամենայն ինչ, որ կատարւում էր պատերազմի դաշտում, կախուած էր խղճից: Բայց խիղճ և պատերազմ—սրանք այնքան հակառակ են միմեանց, որքան ջուրն ու կրակը: Կուգես ջուրն ածա կրակի վրայ, կուգես՝ կրակը ձգիր ջրի մէջ, երկու դէպքումն էլ կրակը կշանգչի:

Պատերազմները որպէս կրակ կշանգչէին, եթէ կարելի լինէր նրանց վրայ մեքանի կամել խիղճ թափել...

Որովհետև խաբել, խարդախել ու կեղծելը իմ սկզբունքներին բոլորովին դէմ էր, բայց որովհետև ծովակիը միշտ այդպէս էր վարւում բոլոր յանախորդների հետ, ուստի մի օր իմ կողմից նկատողութիւն արի՝ թէ դա բոլորովին անխղճութիւն է...

—Խիղճ... քմծիծաղով ասաց նա:—Խիղճն ինչ գործ ունի պատերազմի դաշտում, ուր ամենայն ինչ մարդկային արիւնով է ներկուած և ամեն բան կեանքի գնով է ձեռք բերւում... Խիղճը պէտք է վնարել խաղաղարար ճգնաւորների քարանձաւներում: Կեանքի մէջ խիղճը ձեռնտու չէ, դրա համար էլ վաղուց վտարուած է այնտեղից: Պատերազմի դաշտում մանաւանդ, ուր եկել ենք դրամ վաստակելու, երբ մի գնդակ էլ մեր ճակատին կարող է դիպչել,—այստեղ խղճի անուն տալը բոլորովին անմտութիւն է: Այստեղ եթէ օրական մի քանի հազար հողի սպանելը ներելի է, այդ ակամայ դահիճներին կհգհգին՝ իմ կարծիքով օրէնք է: Այստեղ դեռ չատ բաներ պէտք է պատահեն, որոնք բոլորը իրենց դէմ բաներ են, սակայն հինց դրանցից է, որ պէտք է օգտուիս...

—Օգտուել խղճի դէմ բաներից, այդ ես չեմ կարող, ասացի:

—Օհօ. ասել է խղճի չատ մեծ պաչար ես ունեցել, նկատեց նա խորամանկ ժպիտով.—գալուց առաջ պէտք էր նրան մի սուրբ քահանայի պահ տուած լինէր: Իրաւ՝ եթէ գիտենայի, անպատճառ այս խորհուրդը վաղօրօք կատարի քեզ. բայց այժմ, որ գիտեմ, պարտք եմ համարում խորհուրդ տալ քեզ, որ այդ խիղճը հինց այստեղ մի փափուկ քարի տակ թաղես և չուտով նրա դամբանականը կարդաս, եթէ չես կամենում, որ նա քեզ թաղի ու քո դամբանականը կարդայ...

Մինչև Իւչ-Բիլիակ մեր առևտուրը կատարուել էր ոսքի վրայ. բայց որովհետև այստեղ բանակը մի առ ժամանակ պէտք է մնար, մենք էլ մեր ունեցած ապրանքը տեղաւորեցինք մի տանակի մէջ:

Իւչ-Բիլիակն՝ իւր վանքով ու չրջակայ գիւղերով, կիսաւէր դրութեան էր մատնուած: Թշնամին ռուս բանակի առաջին թնդանօթներին չպիտանալով, խոյս էր տուել: Սակայն նա վրէժը լուծել էր այն անմիջ հայ ժողովրդից, որ այնքան տարի հաւատարիմ էր դրանուել սիրատածող գահին: Թուրքերը փախչելու ժամանակ ինչ որ գտել էին ճանապարհի վրայ, կողոպտել, սպանել ու քանդել էին. մնացածն էլ թողել էին, որ կրակը տեսնէ իւր գործը: Այդ ընդարձակ տարածութիւնը, որտեղով անցանք և որի կեդրոնում կանգ առանք, նմանում էր սոսկալի երկրաչարժից վնատակուած և լափիչ կրակից մխացող մի աւերակի: Կարծես Սողոմը լինէր նա, որին պատժել էր ոչ թէ Աստուած, այլ վրէժխնդրութեան բուռն կրքից կուրացած խլամութիւնը:

Չէի կարող հաւատալ, թէ հայ ժողովուրդը որևէ ապստամբութեան կամ ռուս բանակի օգտին չարժում արած լինելուն համար այդքան անողոք կերպով պատժուած լինէր: Այո, չէի կարող հաւատալ, որովհետև հայի աւանդական հաւատարմութիւնը ինձ չատ լաւ յայտնի է:

Բայց նա պատժուած էր. նրա ինչքը աւարի էր մատնուած, տունը մխում էր և այդ աւերակները նկրկուած էին նրա արիւնով. ցան ու ցիր ընկած և չատ անողոք կերպով յօշոտուած դիակների էինք հանդիպում, որոնց վրայ առանց արտասուքի նայել կարելի չէր:

Այս բանի մէջ պէտք է փնտրել դաղանիքը այն սրտագին ընդունելութեան, որ անում էր հայ ժողովուրդը ռուս բանակին: Մեծ զարմանքով տեսնում էի նրանց արտասուքով լի աչքերն ու յուսահատ դէմքերը, որոնք սակայն ժպտում էին: Ես այդ ժպիտը հս ուրիչ բանի չէի կարող նմանեցնել, բայց միայն փոքրիկ երեխաների ժպիտին, որ արտայայտում են ճիչտ արտասուելու ժամանակ, երբ ցոյց ես տալիս մի հաճելի առարկայ.. Թող լինի այդ առարկան խաբուսիկ, թող նա լինի քաղցր յուսով զօծած դառն յուսախաբութիւն,—այդ հոյն ըմբռնել կարող չէր այնպիսի մի կրիտիկական վարկեանում:

Իւչ-Բիլիակ մտած առաջին օրը ծանօթացայ նոյն դիւղի քահանայի՝ Տէր-Դէորդ Վարժունեան հետ: Դա քառասուն-քառասուն և հինգ տարու մօտ մարդ էր, խիտ մազերով, որոնց մէջ նշմարւում էին ճերմակ թելեր: Առաջին անգամ նայողի վրայ նա մելամազոտ մարդու տպաւորութիւն էր թողնում, թէև իսկապէս մելամազոտ չէր: Նա միչտ խոր և լուրջ մտածելու յատկութեամբ օժտուած մէկն էր, որի ուղեղը միչտ լարուած, միչտ գործունեայ վիճակի մէջ լինելով, չարը կարող չէր մտնել և բոյն դնել այնտեղ, ինչպէս ասում էր ս. Հեղինէն:

Նա բուն ռուսիայի էր, ուր դեռ ունէր մեծ թուով ազգականներ, քոյր ու եղբայր, որոնք հարուստ էին: Մանկութեան ժամանակ, երբ Արարատեան նահանգը դեռ խաղխաղում էր խորին տգիտութեան մէջ, երբ նոյն իսկ քաղաքներում կանոնաւոր դպրոց չկար, —իրենց գիւղը հիւր է գալիս մի ծերունի դահանայ: Պատանի Կարապետը (այսպէս էր նրա աշխարհական անունը) յաճախում է այդ քահանայի մօտ և դասը է առնում: Քահանայի առանձին միայն դիտէր և ներժարում էր, որ նա ինչ-որ մի անծանօթ պատճա

---

*) Տես «Նոր-Դար» № 174.

պատմությունը, որ արեան ցոլցիներ են ու ինչպես ամեն մի ազգ, որ իր ոգին ու իր կեանքը ունի, ունի իր ազգային գրականութիւնը, որ ոչ միայն ներկայացնում է նրա ներքին կեանքի ամբողջ պատմութիւնը, այլ նաև ազդում է նրա հետագայ զարգացման վրայ։

«The Standard»-ի կարծիքով, Նորվեգիայի գրականութիւնը ունի երկու կողմ — Norsk և Sproget։ Առաջինը ներկայացնում է նորվեգական ոգին, որ ստեղծել է իր հարուստ գրականութիւնը, իսկ երկրորդը՝ Sproget, որ ներկայացնում է նորվեգական լեզուն, որ ստեղծել է իր հարուստ գրականութիւնը։ Նորվեգիայի գրականութեան ամենամեծ ներկայացուցիչներն են Ibsen, Björnson, Lie, Kielland, Garborg, Jonas Lie, Arne Garborg, Hamsun, Skram, Krag, Obstfelder, Vinje, Ossian Nilsen, Elster, Gunnar Heiberg, Christian Krohg, Sinding, Thaulow, Werenskiold, Tidemand, Gude, Munthe, Grieg, Svendsen, Backer-Grondahl, Lindeman, Kjerulf, Nordraak, Halvorsen, Lange-Müller, Peter Egge, Agathe Backer-Grondahl, Sigurd Wandrup, Ole Olsen, Johan Selmer, Catharinus Elling, Iver Holter, Johan Svendsen, Christian Sinding, Ole Bull, Halfdan Kjerulf, Edvard Grieg։

Նորվեգիայի գրականութեան ամենամեծ ներկայացուցիչներից մեկը Ibsen-ն է։ Նրա գրական գործունէութիւնը բաժանվում է երեք մասի։ Առաջին մասում նա գրել է հերոսական դրամաներ, որոնց մէջ ամենանշանաւորներն են «Կատիլինա», «Գերեզմանի տէրը», «Գունդստադի արքայադուստրը», «Հերոդիս և Մարիամնէ», «Կոմեդիա սիրոյ մէջ», «Սագա-սագա», «Հերոսական հանդէս», «Ինգեբորգ Ստարկադ

— Ես չեմ կարող ասել, թե ինչ է պատահել ինձ հետ, ես ինքս էլ չեմ հասկանում, թե ինչ է պատահել ինձ հետ, միայն թե ես ինձ զգում եմ ինչ-որ տարօրինակ վիճակում,

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՀԻԱՆԴ

(«Նոր-Դար»-ի Պարիզի Թղթակցից)

—

Պատմական «հիւանդ մարդուն» բաւական ժամանակից ի վեր ընկերակցեց ծայրագոյն Արեւելքի հիւանդը—Չինաստանը, որի դէմ պատրաստւում են խիստ միջոցներ առնելու. այժմ արեւմտեան մի նոր հիւանդ էլ աւելացաւ. Ուրեմն քաղաքական երիք հիւանդներ այժմ իրենց մահճի մէջ պառկած են։ Մարոկկոն, որ կարծւում էր թէ հանդարտուեցաւ իւր վերջին խռովութիւններից, ցոյց տուեց, որ արդարև միւսիւլմաններդ ուրեք էլ որ լինին, նոյնն են, այսինքն նրանք պատմութիւնից օգտուել չգիտցող նոյն մոլեռանդ էակներն են, որոնց գոյութիւնը քաղաքակրթութեան խաղաղ յառաջընթացման համար մի անէծք է։ Մարոկկոյի բնակիչները երկար խաղաղ մնալը, երեւի, ձանձրութիւն համարեցին, ուստի վերջերս յարձակում են գործել Եւրոպայի, գլխաւորապէս Սպանիայի, նաւերի, ծովեզերեայց, և այդ երկրում ապրող խաղաղ բնակիչների վրայ։ Որքան էլ որ Սպանիան Կուբայի ապստամբութեան ճնշումով կաչկանդուած լինի, կարծւում է թէ մի եռանդալից միջոց ձեռք կառնէ, որ իրերը նորից չկըրկնուին, իսկ պետութիւնները, գուցէ, ընդհանուր վտանգի համար մի առ ժամանակ մոռանան իրենց չհին այդ կռուածաղկի նկատմամբ, եթէ սուլթանը զօրութիւն չունենայ խռովարարներին պատժելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՀԻՆ ԻՄԱՍՏԱՍԷՐՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

—

Իմաստասէրներն առհասարակ չատ էլ բարեհաճ աչքով չեն վերաբերուել կանանց։

Սոկրատէսն ասում էր. «Կինը ամեն տեսակ չարիքի աղբիւր է։ Կնոջ սիրուց աւելի չատ պէտք է վախենալ, քան տղամարդու տաճկութիւնից։ Կնոջ սէրը Թոյն է և այնքան աւելի վտանգաւոր Թոյն, որ նա քաղցր է»։

Տակառի մէջ ապրող Դիոգինէսը, որ երբէք ամուսնութեան համը չէր առել, կանանցը հետեւեալ կոմպլիմենտն է անում. «Աչխարհս ոչ մի գանձով Թոյլ չէի տալ, որ տակառս կին մտնէ»։

Արիստոտելը յայտարարում է, որ «կինը—բնութեան գործած մի սխալմունք է»։

Էվրիպիդն ասում է. «Բնութիւնը կընոջը տուել է նուրբ հնարագիտութիւն, ճարպիկութիւն և խելահասութիւն ամեն... դատարկ և վատ գործերում»։

Ֆուկիդիդ-ը.— «Ամենաարժէք գովասանքը, որին կարող է արժանանալ կինը, այդ այն է, որ նրա մասին վատ խօսես»։

Այն հարցին, թէ ինչն է աւելի վտանգաւոր մարդու համար, Դեմոկրիտը պատասխանեց. — «Կրակը, ջուրը և... կինը»։

Իւվենալն ասում է.—«Ի՞նչն է փառուրից աւելի Թեթեւ—Փոչին—Ի՞նչն է փոչուց աւելի Թեթեւ—Քամին—Ի՞նչն է քամուց աւելի Թեթեւ—Կինը—Իսկ կնոջից ինչն է աւելի Թեթեւ—Ոչինչ»։

Դեմոսթենէսը.—«Կանանց մէջ առաւելապէս զօրեղ են կործանիչ ձգտումները. ինչ որ տղամարդը խորհում է ամբողջ տարիներով, կինը պատրաստ է մի օրում կործանելու»։

Հիպոկրատը.—«Երկնքի վրայ ինչքան որ աստղ կայ, այնքան էլ խաբեբայութիւն կայ կնոջ սրտում»։

Կատոնը.—«Վախեցէք երեք դժբաղդութիւններից. աստուածների բարկութիւնից, հայրենիքի դաւաճաններից և... կնոջ սիրուց»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՌԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ։

—

ՊԱՐԻԶ, 29 սեպտեմբերի.— Պաշտօնական հաղորդագրութիւն է տարածած Տանանարիւայի առման մասին։ Հետեւեալ օրը խաղաղութեան գաչն է կըռուել, որով Ֆրանսիական աւելի ընդարձակ գերիչխանութիւն է սահմանուած Մադագասկարի վրայ, քան առաջ։ Թագուհին չի զրկուած գահից. առաջին մինիստրն աքսորուած է։ Գեներալ Միլինգերը նչանակուած է Տանանարիւայի նահանգապետ։ Ֆրանսիական կառավարութիւնը Մադագասկարի զօրքերի հրամանատար Դիւչէնին և նրա զօրքերին հետադիր զրկեց Ֆրանսիայի և կառավարութեան կողմից չնորհաւորելով յաղթութիւնը։ Կառավարութիւնը կառաջարկէ պարլամենտին մեդայլ կարել բաժանելու համար Մադագասկարի պատերազմին մասնակցող բոլոր զինուորներին։

—

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ՊԱՐԻԶ, պ. Սասլահ-Դիւչեանին։ Մակ Քոլլի գրքի յառաջաբանը ստացել ենք։

Ձեր միտքը լաւ է, խմբագրութեանս մէջ էլ նոյն տեսակ միտք է յղացել «Նոր-Դար»-ի ընթերցողներին օգտաւէտ լինելու մասին չատ ենք մտածում, միայն փող է հարկաւոր։ Ինչ անես մեր հասարակութեան մէջ, երբ լաւ գիրը ստանում են և տարիներ անցնում ու բաժանորդագինն անգամ չեն վճարում։

—

ԼԱՑՊՅԻԳ, պ. Ե. Խ.-ին։ Ինչմէ էք լռում։ Այսուհետև սպասում ենք։

—

ՊԱՐԻԶ, պ. Մ. Ա.-ին։ Նոր-Դար»-ը ուղարկւում է ձեզ։ Յայտնեցէք կանուխ, որ հասնէն ուղարկեն մեզ և «Նոր-Դար»-ն անմիջապէս կուղարկուի։

—

ԹԻՖԼԻՍ, պ. Ե. Ս.-ին։ Դուք իրաւունք ունիք. այն ժամանակ, որ Թիւրքիայում տեղի են ունենում սարսափելի խառնակութիւններ, և հայերի արիւն է հոսում, մեր տեղական հայ Թերթերը ահագին առաջնորդողներ, անվերջ ու ձիգ և անբովանդակ յօդուածներ են նուիրում «Նոր-Դար»-ին, լի ամեն տեսակ հայհոյանքներով։ Դա բնորոշում է այդ Թերթերի տիպական բնաւորութիւնը։ Հասկացել էք դրանց դիտաւորութիւնը.—բաժանորդ են մուրում։ Զարիքը վերջ ունի, առաջնորդողը մահասյ բռնած, դրանք պղտոր ջրում ձուկ են որսում։ Հարցնում էք, թէ կարդացինք «Արձագանք»-ի ուրբաթ օրուայ համարի նամակը, Յովսէփ Ճանիկեան ստորագրութեամբ, որ ուղղուած է «Նոր-Դար»-ի դէմ։ Պատասխանում ենք, որ մենք այդ ըռ-ըմա նամակը դեռ չենք կարդացել, և ուրտեղից գտնենք ժամանակ այդպիսի նամակներ կարդալու, քանի որ մեր խմբագրութեան ստացած նամակները Թերթակի կարդալու էլ ժամանակ չենք գտնում։ Աւելի կարեւոր խնդիրներ կան հրապարակի վրայ. այդ երրորդական խնդիրներին դառնալու ժամանակ չատ կայ։

Իրաւունք ունիք, որ ասում էք. վտանգ «Ակնայ յարգելի պատգամաւորին», որոնելու, լաւ կըլինէր, որ ձեզ հակառակող Թերթը Պոլսում մի Թըղթակից պահէր և բոլոր լրագրերում արպածները ծաղկեցնելով ստիպուած իրեն Պոլսից Թղթակցութիւն չհրատարակէր։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԽԸՆԴՐՈՒՄ Է Նրանցից, որոնց վերայ նեղուայ և անցեալ տարինեից ապառիկներ են մնում կամ որոնց մօտ «Նոր-Դար»-ին հասանելի գոմարներ են գտնւում—բարեհաճեն վերջապէս ուղարկելու իրենց։

Վարչութիւնը «Նոր-Դար»-ի վերայ պրոպէգանդա անելով և բոլոր Թերթերից աւելի շատ համարներ լոյս հանելով իրաւունք ունի սպասելու, որ Թերթի պարտականներն իրենց պարտաւորութիւնը չեն զլանալ կատարելու։



Ուրբաց Հոգ. Ընկ.

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաքուի, Օդեսսայի եւ Կ. Պոլսի միջեւ

Բաղարջ պրոբա է Քոմա

Շաբաթ օրերը լոյս կիրակի, գիշերուայ 3 ժ., չրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովորոսիյսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստապոլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը՝ լոյս չորեքշաբթի, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդասար չոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Հորեքշաբթի օրերը՝ լոյս հինգշաբթի, գիշերուայ 4 ժամին, չրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օրբեսայից գալիս է Բաքո՝

Երկուշաբթի օրերը առաւօտեան՝ ուղիղ ընթացքով։

Հորեքշաբթի և Ուրբաթ օրերը, երեկոյեան չրջանառու ընթացքով։

Երկուշաբթի օրերը, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը չրջանառու ընթացքով.

Դադարակայութիւնը գտնւում է Թիֆ. Կալ. բանկի գալերէյում №№ 117—118

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՈՒԵԱԼՆԵՐ

Դ ԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁՈՑՆԱԽՋԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՃԼՆ ԵՒ ԱՃԼՆ

բոլոր տեսակ գործիների համար դիմը կարելի է վճարել մաս-մաս,

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐ
ապրանքատան են չէն

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՂԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
Դ Ե Պ Օ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкальное депо Б. М. Миримяна Тифлисъ Дворцовая ул.
(652) 30—11

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Կիրակի, 1-ին հոկտեմբերի

Հայ դերասանական ընկերութիւնը կրներկայացնէ

ՄԱՄԷԼ

Ողբերգութիւն 4 արարուածով։ Հեղ. Հեքիմեանի

II.

ԷՄԷԼ ԿՈՒ ՄՈՑԻՔՂՈՒԹԻՒՆ

Վոդևիլ 1 արար. Հեղ. Մ. Տէր-Գրիգորեանի

Մասնակցում է ամբողջ խումբը։

Գարտերի վերջին երեք կարգում աթոռն արժէ 75 կոպ.

Սկիզբը ժամի 8-ին է։

1—1

ԳԵՄՔԻ ՎՐԱՑ ՆԿԱՏԵԼԻ ՉԷ ՄԻԱՅՆ

„ՊՈՒԴՐ ՀԻԳԻԵՆԱ“-Ն ՍՓԱՆՉԵԼԻ ՀՈՏՈՎ

»ՀԻԳԻԵՆԱ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» С.-ПЕТЕРБУРГЪ, Александр. площ. 9 МОСКВА, ВАРШАВА

(М.) 9—4



ԼԻԱԿԱՏԱՐ
ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ազիւսի, կաւէ ամանեղէնի և ֆայլցի ազիւսի չոգեգործարանների համար

ՍԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ Է, ԻԲՐԵՒ ԵՐԿԱՐԱՄԵԱՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԱՄՈՒՐ ԵՒ ԾԱՆՐԱԿՇԻՌ ԳՈՐԾ

LOUIS JACER Maschinenfabrik, Koln Ehrenfeld

(М.) 3—3

Մխիթէթ կայարանից ոչ հեռու, երկաթուղու գծի մօտ անցեալ տարուանից բացուած

Ե ԳՐԱՑ ԱԼԻԲԷԳԵԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

պատրաստում է ամենալաւ կաւից զանազան տեսակ *աղիւսներ, Մարսէլլի* տեսակի *կրամիտա* և *տոմնա* յատակների համար։ Բոլորի նմուշները և գործարանի պլէյս-կուրանտը կարելի է ստանալ քաղաքային տան տակը (подъ городской управой) պ. Նադինովի թըղթի խանութում, պ. Զովանի խանութներում Գոլովինսկի պրոսպեկտի վրայ Գօրբժանսկու տանը և Միքայէլեան կամուրջի վրայ Վարանցովի արձանի հանդէպ, Ս. և Կ. Գերասիմէչ Եղիազարովների խանութում Թումբայ մպղտանի մօտ և Ալճալեան Ձիաքարշի պարկում, երկաթուղու կայարանի մօտ։

Օտարաքաղաքացիք Թող բարեհաճեն դիմել նամակով և հեռագրով Тифлисъ Баграту Алибекову կամ Мцхетъ, заводъ Алибекова.

(680) 15—9.

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՈՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՕ 2.500.000 ր.
Բացի պահեստի գումարներից

ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ամեն տեսակ շարժական եւ անշարժ կայքերի.

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ծովային, գետային եւ ցամաքային այլ եւ ապահովագրութիւն նաւերի

ԿԵՆՏՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
առանձնապէս ձեռնտու պայմաններով եւ արտօնութիւններով ի ղէպ աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ.—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ր. դրամագլխի, որ պիտի տրուի իր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամսում վճարէ 78 ր., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձերի ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ գարձած դիպուածում տրուող դրամագլուխը ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունւում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիսում (Վելեամինովկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հասարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կովկիայում, 3-րդ հաչտարար դատարանի կողքին, տ. Ալիխանի, Ֆեօդոր Ալէքսանդրովիչ Իվանովի բնակարանում։

(336) 100—56

Тифлисъ Доз. Цензуромъ 29-го Сентября 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի, Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. Церковный домъ